Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ, ՓԱՌՔ ՔԵԶ

... Իսկ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի լեփ-լեցուն դահլիճին դեմ-հանդիման կանգնած էր համեստ արտաքինով, նիհար ու ամոթխած մի աղջնակ, արտաքնապես հանգիստ ու խաղաղ, թեև վատ թաքցված հուզմունքը զգացնել էր տալիս իրեն: Դրա փոխարեն նկատելիորեն հուզվում էր առաջին շարքում նստած ամուսինը՝ Խորեն Պալյանը, և, արդեն առավել բացահայտ, մեր ինստիտուտի աշխատակցուհին՝ Ռուզան Նանումյանը:

Տակավին անհայտ ու անանուն այդ աղջնակի՝ Լուսինե Զաքարյանի մենահամերգն էր Գրականության ինստիտուտի խստապահանջ կոլեկտիվի առջև՝ գիտության դոկտորների, պրոֆեսորների, գիտությունների թեկնածուների ու գիտության վաստակավոր գործիչների առջև, ուստի և հասկանալի ու մեկնաբանելի էր Լուսինե Զաքարյանի այդ ազնիվ հուզմունքը: Մեկնաբանելի էր նաև դահլիճի խստապահանջ անդրադարձ-վերաբերմունքը, ավելի ճիշտ՝ այդ վերաբերմունքը ծնող շարժառիթը: Բոլորս էլ գիտեինք, որ իր «երգչական» ճանապարհը նոր-նոր սկսած Սվետլանա Զաքարյանը ավարտել էր Երևանի երաժշտական կոնսերվատորիան, հանդես էր եկել մեկ-երկու մենահամերգներով, որի համար դրվատանքի էր արժանացել: Գիտեինք, որ նրան՝ իր կարողությունների ու հնարավորությունների սահմաններում, հովանավորում էր գրականագետ Ռուզան Նանումյանը, որի ստիպմամբ ու դրդմամբ էլ երգչուհին իր «Սվետլանա» անունը փոխել էր «Լուսինեի»: Գիտեինք, վերջապես, որ նրա ամուսինն էր Խորեն Պալյանը, և նրանք համերաշխ զույգ էին: Ահա, թերևս, բոլորը...

Առաջին երգը՝ «Հորժամը», թերևս, շատ էլ մեծ ազդեցություն ու տպավորություն չգործեց: Վաթսունական թվականները կուսակցական սկզբունքային- միագիծ քաղաքականության, Մարքսի «Կրոնը ժողովրդի օպիումն է» կարգախոսի, «Ստալինյան աճող սերնդի» ձևավորման ու հասունացման տարիներն էին, ուստի զարմանալի չէր, որ «Հորժամը» չընկալվեր և չըմբռնվեր այնպես, ինչպես սպասելի էր: Էլ չեմ խոսում այն մասին, որ դահլիճում նստած տիտղոսակիր ու կոչումնակիր մեծություններից շատերը սկսեցին դժգոհ փսփսուքով իրար հարցնել, թե՝ «Հորժամն ի՞նչ է»: Խստացավ դահլիճը, դարձավ ավելի պահանջկոտ, ավելի քմահաճ, և այդ զգաց երգչուհին: Նրա հանգիստ-ամաչկոտ պահվածքի մեջ ներքին անբեկանելի վստահության ու նպատակային հաստատուն երևակումների որոշակի շեշտեր նկատվեցին: Զգաց, որ իրեն մարտահրավեր է նետված՝ սկզբունքային, անզիջում մարտահրավեր և ինքն այստեղ, հենց այս

դահլիճում կամ պետք է կարողանա հաղթել, հաղթել հիմնավորապես, մինչև վերջ, առանց մնացորդի ու առանց զիջման, կամ էլ...

Ա՞յս էր արդյոք պատճառը, թե այդ պատճառից ծնվեց դրա բնականոն հետևանքը՝ չգիտեմ, բայց Լուսինե Զաքարյանը նույն հանդարտ-անվրդով պահվածքով սկսեց երգել Բարսեղ Կանաչյանի «Օրորը»։

... Տե՛ր իմ Աստված, դա ե՞րգ էր, թե հրեշտակների քաղցրալուր մրմունջ, թե՞ տիեզերական խորհրդավոր անսահմանություններից մեզ հասնող անմեկնելի ղողանջների մի հրաշք-համադրություն։ Դա ե՞րգ էր, թե՞ անճառելի հնչյունների, հոգու աննյութական կայլակումների, մայրական անբիծ ու խանդակաթ սրտի սրբազան ալեբախումների մի քաղցրօրոր թռիչք։ Եվ անբացատրելի ոգեկանության հետ արդյոք գերակա կապերի մեջ չէր ահա այստեղ, անշուք այս բեմի վրա կանգնած միանգամայն նյութական այս աղջնակը, քանզի չտեսնված-չլսված ձայնը արդեն դուրս էր մարդ-մահկանացուի ընկալման ու պատկերացման՝ թեկուզ ամենալայն ոլորտների սահմաններից և ասես սերտաճվում էր գերերկրայինի ու աստվածայինի հետ...

Եվ այստեղ էր, որ տեղի ունեցավ ամենազարմանալին։

Երգի վերջին թրթիռները մարեցին-հանգան դահլիճում։ Լուսինեն մի քանի անգամ խոր շունչ քաշեց, ապա ժպտաց իր անուշիկ ու առինքնող ժպիտով, կանաչ աչքերի հանդարտ հայացքը սահեցրեց ներկաների վրայով, սակայն դահլիճի պատասխանը եղավ քար լռությունը։ Այդպիսի հիպնոսացված լռություն լինում է այն ժամանակ, երբ հանդիպում ես մի անսեպելի հրաշք-երևույթի, կամ չտեսնված-չլսված մի իրողության, կամ...

Եվ երբ դահլիճը վերջապես ուշքի եկավ, հավաքեց իրեն ու կարողացավ ընկալել Լուսինե Զաքարյանի հրաշք-ֆենոմենը, հասավ այն գիտակցությանը, որ հանձինս նրա ունի մի երգչուհու, որի ձայնի մեջ իրար հետ սերտաճել են մարդկայինն ու աստվածայինը, – որոտացին խլացուցիչ ծափերը։ Սանձակոտոր դահլիճը որոտում էր ու դղրդում։ Խելագար ծափերին շուտով միացավ ոտքերի ոչ պակաս խելագար դոփյունը, սրան էլ միացավ հիացական բացականչությունների օվկիանոս-հեղեղը։ «Լուսինե, փառք քեզ» խոսք-կոչս «ուղեկցելով» հնարավորին չափ աղմկոտ ծափերով, թոքերիս ամբողջ ուժով գոռում էի ես։ Ասածս վայրկենապես տարածվեց, ընդհանրացավ և մի ամբողջ դահլիճ, հիացմունքից բոցավառ դեմքերով ու կայծկլտացող աչքերով սկսեց ոգևորված վանկարկել՝ «Լու-սի-նե, փա՛ռք, քեզ, Լու-սի-նե, փա՛ռք, քեզ» և դա տևեց շա՛տ, շա՛տ երկար...

Այսպես եմ ես ճանաչել Լուսինե Զաքարյանին։

* * *

«Լուսինե, փա՛ռք քեզ»-ը դարձավ, այսօրվա տերմինաբանությամբ ասած, մեր հանդիպումների կարգախոսը։ Որտեղ էլ նկատեի նրան՝ լիներ Երաժշտական կոնսերվատորիա գնալու ճանապարհին, թե տրամվայ-տրոլեյբուսի կանգառում, լիներ իր տան մոտ գտնվող մարդաշատ պուրակում, թե մեր քաղաքի կենտրոնական հրապարակում, – մի հաճելի ներքին հուզմունքով կանգնում էի նրա ճանապարհին և դեռ բավական հեռվից խրոխտաձայնում էի իմ ողջույն-կարգախոսը. «Լուսինե, փա՛ռք քեզ»։

Չէր նեղանում, թեև ճիշտն ասած, առանձնապես չէր էլ խանդավառվում։ Հետո, շատ հետո պիտի հասկանայի, որ Լուսինե Զաքարյանը այն աստվածընտիր երգչուհին էր, որի համար գոյություն չուներ երկրայինն ու աշխարհիկը, որ աշխարհածին փառքերը, գնահատականները, կոչումներն ու փառաբանությունները նրան գրեթե չէին հետաքրքրում։ Ահա թե ինչու նա հանգիստ ու սովորական էր ընդունում այդ կարգի ամեն մի ոգորում, հարկավ նաև իմ գերադրական բարև-ողջույնը։ Մի անգամ միայն ինձ նայեց դժգոհ-քննադատական հայացքով և՝

- Է՛, այդպես մի ասա, ամաչում եմ։

- Բայց մի՞թե սխալ եմ ասում։

- Դե՝ չգիտեմ։ Գոնե սպասիր գնամ-գամ, հետո։

-Ո՞Իր գնաս-գաս։

- Գնալու եմ Փարիզ։ Համերգներ եմ տալու։

- Փարի՞զ, – ականջներիս չհավատացի ես, - դու պատկերացնո՞ւմ ես, թե ուր ես գնում։

Ժպտաց իր անուշ ժպիտով.

- Իսկ ի՞նչ կա որ։ Կգնամ, կերգեմ ու կգամ։ Լավ կլինի, կտեսնես։

Գնում էր Փարիզ...

Իմ երկյուղալից անհանգստությունը մեկնաբանելու կարիք, կարծում եմ, չկա, քանզի ամեն ոք լավ գիտե, թե արվեստի մարդկանց համար ինչ է անհնազանդ ու կամակոր, բայց արվեստագետ ու արվեստասեր Փարիզը։ Այդ Փարիզն էր, որ մի քանի ռոպեների ընթացքում ճանաչեց, մեծարեց և բեմահարթակից-բեմահարթակ առաջնորդելով՝ համաշխարհային փառք ու ճանաչում ապահովեց տեքստիլի աննշան բանվորուհուն, որը դառնալու էր Միրեյ Մաթյո, բայց այդ նույն Փարիզն էր, որ ոտնատակ տվեց ու ջախջախեց աշխարհիս բազմաթիվ երկրներում մենահամերգներով հանդես եկած այն երգչուհուն, որն ի դեպ, կյանքն ավարտեց ինքնասպանությամբ։ Արվեստասեր ու համառ Փարիզն էր, որ կանաչ լույս վառեց հայազգի երգիչ

Շարլ Ազնավուրհի ճանապարհին, բայց նույն այդ Փարիզն էր, որ չընդունեց ու չճանաչեց նրա քրոջը, թեև մասնագետները նույնիսկ այսօր էլ պնդում են, որ իր ձայնային տվյալներով նա չէր զիջում եղբորը: Այս էր ու այսպիսին էր Փարիզը, իսկական արվեստի երկրպագու ու պաշտպան, բայց արվեստակների ու արվեստակության հանդեպ անողոք Փարիզը: Ես մեկից ավելի երգիչ – երգչուհիներ գիտեմ, որոնք մենահամերգներով հանդես են եկել աշխարհիս շատ երկրներում, արժանացել են բուռն ծափերի ու դրվատական գրախոսականների, բայց որոնք այնուամենայնիվ զգուշանում էին մեկնել Փարիզ: Եվ Լուսինեն, գրեթե սկսնակ մի երգչուհի, մեկնելու էր Փարիզ, մենահամերգների...

Հանդիպեցինք գալուց հետո, մեր քաղաքի Կենտրոնական փոստատանը: Իսկ որովհետև ձեռքին բացիկներ ուներ, ենթադրեցի, որ նամակ-բացիկներ պետք է առաքի միության ու աշխարհի իր ծանոթ-բարեկամներին, մանավանդ որ առջևում Ծննդյան տոներն էին: ՈՒրախ ծիծաղեց իր արծաթահնչյուն ծիծաղով, երբ ես, կես-կատակ, կես լուրջ հետաքրքրվեցի, թե ովքեր են այն երջանիկները, որոնց համար նախորոշված են այդ բացիկները:

- Սրանք բացիկներ չեն, սրանք Փարիզից ստացած իմ «Կարտ-Բլանշ»-ներն են...

- Դու Փարիզում «Կարտ-Բլանշ» ե՞ս ստացել, – շշմեցի ես:

- Այո, այն էլ մի քանի հատ, – ժպտաց ամոթխած, – ահա դրանք, որ ինձ մոտ, գրպանումս են մնացել: Մյուսներն էլ տանն են...

Բառիս իսկական իմաստով լեզուս կապ ընկավ...

«Կարտ-Բլանշը» (սպիտակ քարտ), տվյալ երաժշտական հաստատության պաշտոնական կնիքով կնքված ու տնօրինության ստորագրությամբ վավերացված բացարձակապես սպիտակ թուղթ էր, որն այդ հաստատությունը տալիս էր իրենց մոտ համերգով հանդես եկած ընտրյալին, լրացնելու համար, նախօրոք արդեն անվերապահորեն համաձայն լինելով այն բոլոր պայմաններին, որն առաջարկելու էր նա: «Կարտ-Բլանշ» և այն էլ Փարիզում, կարող էին ստանալ միայն բացառիկները, ամենաընտրյալները, ամենահազվագյուտները, այսինքն այնպիսինները, որոնց նկատմամբ Փարիզը ընդունում էր նրանց անվերապահ գերազանցությունը: Երգչուհիներ են եղել, ովքեր տասնյակ տարիների իրենց մենահամերգային գործունեության ընթացքում հազիվ մեկ հատիկ «Կարտ-Բլանշ»-ի էին արժանացել և արդեն բազմաթիվ էին այնպիսինները, ովքեր դրան էլ չէին արժանացել: Իսկ Լուսինեն ձեռքին բռնած ուներ մի քանիսը և դեռ՝ «մյուսներն էլ տանն են»...

Դե էլ ինչպե՞ս խանդավառ հիացմունքով չողջագուրվեի նրա հետ և ինչպես չգոռայի Կենտրոնական փոստատան ամբողջ սրահով.

- Լուսինե, փա՛ռք քեզ։ Երիցե փա՛ռք քեզ, Լուսինե։

Լուսավորիչ, 1993, մարտի 8, № 2